WIEN 7/2 BESTELLT

ՆՈՐ-ԴԱՐ

№ 133 ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի, 10 Օգոստոսի 1899 Երեքշաբթի, 10 Օգոստոսի ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 133

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
ամիսը 1՝ ր., համար 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція ,,Норъ-Даръ '
կամ Tiflis. Rédaction ,,Nor-Dar''

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով:
Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.---Կիրքը և քաղաքակրթութիւնը:
Քրոնիկոն.—Լուրեր:
Մեզ գրում են.---Մերվից: Շուշուց:
Կ. Պոլսի հայ թերթերից:
Հայոց կոնգրէսը:
Թղթակցութիւններ.---Շուշուց:
Բազմազան.—Թիֆլիս: Փրանսիա:
Հեռագրներ:
Բանասիրական.---Խաչատուր Աբովեանի հասարակական և գրական գործունէութիւնը:
Տեղեկատու:
Յայտարարութիւններ:

Թիֆլիս, 9 օգոստոսի 1899 թ.

ԿԻՐՔԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Քիչ-շատ կուլտուրայի ընդունակ, կուլտուրական ազգերը դիմում են անընդհատ քաղաքակրթութեան թէ մտաւոր և թէ հոգեկան բարձր զարգացման: Եւրոպական ազգերը քաղաքակրթութեան կողմից շատ առաջ են գնացել, երկրագնդի միւս մասերին ծառայում են իբրև օրինակ, իսկ փրանսիական ազգը հաւակնութիւն ունի և իրեն համարում է եւրոպական քաղաքակրթութեան առաջնորդ:

Դժբաղդաբար մարդկային կիրքն ընդունակ է քաղաքակրթութիւնը նսեմացնելու և պայծառին կուրացնելու նրա արդիւնքը:

Մարդկային կիրքերը Փրանսիայում այն աստիճանին են հասել, որ մարդկանց՝ անսահման աստիճանին են իջեցրել, ուղիղ դատելու ընդունակութիւնից զրկուած են նրանք, և մեռել է նրանց մէջ խղճի ձայնը. Փրանսիացիները, իրենց արարքով, ապշեցնում են նոյն իսկ կիսակիրթ և յետամնաց ժողովուրդներին և խորապէս յուզում ամեն ազգի բնախ մարիքը և վրդովում զգայուն սրտերը:

Ամեն մի քիչ-շատ քաղաքակրթուած ազգի մէջ փաստաբանը, ուզում ենք ասել խղճական փաստաբանը պէտք է յարգուած լինի. իրաւունքին, մարդկային իրաւունքին և ճշմարտութեան գործին, ու ոչ զրոյցին, ծառայող փաստաբանի անձը պէտք է ամեն կերպ ապահովուած լինի:

Եւ ինչ ենք տեսնում:

Ճշմարտութիւնը որոնող, ազնիւ և բարձր ձգտումներով մարդկային իրաւունքի անխախտութեան դէմ պաշտպանող, թէ նիւթական, թէ բարոյական, թէ ընկերական ամեն բարիք զոհող և ամեն նպատակին յանձն առնող Լաբորին, այդ տաղանդաւոր, այդ չնաշխարհիկ և ամեն կերպ համակրելի փաստաբանը վայր է ընկնում սպանութեամբ, նենգութեամբ ետևից իրեն ուղղուած գնդակի հարուածով:

Ահա այս սար և կոյրի միջոցին են ուզում Փրանսիայում խանգարել արդարադատութեան գործը. այս միջոցով են ուզում հանգցնել լոյսը, խաւարը պատել և մարդկային սուրբութիւնը հրապարակ հանելու յոյսը:

Մարդկային կիրքերը որ աստիճանին են հասել Փրանսիայում:

«Ես գնում էի կնոջս հետ զինուորական ատեան,---ասում է Լաբորին:---Կինս մնացել էր բնակարանում մաքրի ամսով. Նա վերադարձաւ տուն: Ես մենակ գնացի և, նկատելով հեռուից Պիկարին և Գաստին, հասայ նրանց ետևից: Յանկարծ լսեցի ատրճանակի պայթիւնը և մեծ ցաւ զգացի ու գետնի վրայ ընկայ: Պիկարը և Գաստը չարագործի յետևից ընկան. ինձ շրջապատեց ամբոխը, բայց ոչ ոք ինձ ոչինչով չօգնեց, մինչև որ կինս եկաւ:

«Նա ինձ որ տեսաւ, հասկացաւ սպառնացող վտանգը և օգնութեան մասին կարգադրութիւն արաւ: Այդ միջոցին մի ինչ-որ երիտասարդ մարդ, իրեն իբրև բժիշկ ներկայացնելով, երակս բռնեց և գրպանս պարպեց: Այս վերջին տարու կէսում ես ամեն օր ստանում էի սպառնական նամակներ: Դեռ երեկ էր, որ այդպիսի երեք նամակ ստացայ. այդ նամակներից մէկում սպառնում էին կրակ ձգելու իմ բնակարանս: Սպանութեան փորձն իմ դէմ կօգնէ միայն խեղճ Դրէյֆուսին»:

Բարեբաղդաբար Լաբորին, ստացած հեռագրներին նայած, առողջանալու վրայ է, և Դրէյֆուսի գործի քննութիւնը երկար ժամանակով յետաձգուած չէ, ինչպէս այդ սպասում էին հակադրէյֆուսականները և մարդասպանին վարձողները:

Չարագործը փախչելիս գոչում է, եղել, թէ մի գնդակով դրէյֆուսականութիւնը ոչնչացրեց:

Ուշադրութեան արժանին այն է, որ ամբոխից ոչ որ չէ օգնել Պիկարին և Գաստին՝ չարագործին բռնելու գործում. ամենքն էլ փախել և անտարբեր են գտնուել:

Թէ որ աստիճանի կարող է մարդկային կիրքն սպանել մարդու մէջ մարդկայինը և այն ամենն ինչ որ նրա պարծանքն է, հարկ ենք համարում մէջ բերել պատառ «Libre Parole» հակասեմիտական թերթի կարծիքը Լաբորու դէմ սպանութեան փորձի առթիւ:

«Այսօր սպանութիւն, վաղը՝ յեղափոխութիւն» առանց ամօթի գրում է յիշեալ թերթը՝ կատարուած չարագործութեան վրայ խնդալով:

Այդ կողմից փրանսիացիներն անցան և մեր ընտրութիւնների հերոսներից, որոնց ամեն մի անհատն, յանուն ճշմարտութեան, ինչ ասես, չէր անում, և՛ քարերին, և՛ քաջերին, և՛ թզուկներին երկինք բարձրացնում ու մարդկային իրաւունքը, իրենց ու այն ամենը, ինչ որ սուրբ էր, ոտքի տակ առած տրորում էր:

Մարդկային կիրքն ամենակարող է և ընդունակ մէկ անգամից ոչնչացնելու երկար ժամանակների ընթացքում քաղաքակրթութեամբ ձեռք բերուածը:

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում օգոստոսի 1-ից ց31-ն դեկտեմբերի և վճարում են 5 ր. 25 կ.:

ՔՐՈՆԻԿՈՆ

Ներքին գործերի մինիստրութեան կից մի առանձին յանձնաժողով է կազմուած քննելու համար բնակարանների տուրքը քաղաքների օգտին յանձնելու և այդ տուրքը վճարողներին ընտրողական իրաւունք տալու խնդիրը: Յանձնաժողովը իր առաջին նիստն ունեցել է յուլիսի 30-ին:

Լուսաւորութեան մինիստրութեան մէջ խնդիր է յարուցուած Թիֆլիսի, Քութայիսի և Սև ծովի նահանգներում մի առանձին տեսակի ուսումնարաններ բանալու՝ բացառապէս տեղական բնակիչների կրթական կարիքների համար: Այդ ուսումնարաններում կաւանդուին գիւղատնտեսութեան, կենդանաբուծութեան, ճանապարհային և շինարարական գործին վերաբերեալ առարկաներ:

— Մամուլի գործերի գլխաւոր վարչութիւնը մի շրջաբերականով ամենօրեայ լրագրների խմբագիրների և հրատարակիչների եզրակացութիւնն է խնդրում այն մասին, որ այդպիսի լրագրների մշտական աշխատակիցներին, գրաշարներին և տպարանական միւս ծառայողներին տօն օրերին հանգստութիւն տալու և նրանց աշխատանքի ժամերը կրճատելու. դրա համար մամուլի գործերի գլխաւոր վարչութիւնն առաջարկում է 1) տօն օրերին դադարեցնել կամ կրճատել աշխատանքները այն տպարաններում, ուր ամենօրեայ լրագրներ են տպւում, լրագիրը լոյս չհանել տօներին հետևեալ օրերին և երկուշաբթի օրը և 2) օրական աշխատանքի ժամերը որոշել համաձայն գործարանների բանուորների օրական աշխատանքի տևողութեան վերաբերեալ պետական խորհրդի 1897 թ. յունիսի 2-ի Բարձրագոյն հաստատուած որոշման:

Որովհետև տարէցտարի ռուս առևտրական-արդիւնաբերական դասակարգի յարաբերութիւններն ասիական երկրների հետ աւելի ու աւելի լայն ծաւալ են ստանում, այդ պատճառով այս տարուայ հոկտեմբերին Պետերբուրգում կեդրոնական մի գրասենեակ է բացւում, ուր կարելի է տեղեկութիւններ ստանալ Ասիային վերաբերեալ առևտրական բոլոր գործերի մասին: Գրասենեակը իր բաժանմունքները կունենայ Մոսկուայում ու Նիժնի-Նովգորոդում և յատուկ գործակալներ՝ ասիական բոլոր խոշոր կեդրոններում:

— Բելգիական դրամատէրների մի խումբ երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնից թոյլտւութիւն է խնդրում ակցիոներական ընկերութիւն կազմել՝ Կովկասեան հանքային ջրերը շահագործելու և պատշաճաւոր սարքաւորելու համար:

- Անդրկովկասեան երկաթուղու համար ստացուած են նոր ձևի կատարելագործուած շոգեմեքենաներ, որոնք մի ժամում կտրում են աւելի քան ինննսուն վերստ տարածութիւն: Այդ շոգեմեքենաները, որոնք պիտի գործածուին մարդատար գնացքների համար, կբանեն Թիֆլիսի և Եւլախի միջև:

— Սամարղանդում (Անդրկասպեան երկիր) աղջկանց չորս դասարանեայ պրոգիմնազիոն է բացւում:

— Ղուբայից «Նով. Օբ.»-ին հաղորդում են, որ զինուորական-նահանգական դատարանը, օգոստոսի 3-ին, քննելով Սեբերից փախած Բէգլար Մահմա-օղլու գործը, որ մեղադրւում էր իշխանութեան զինեալ ընդդիմութիւն ցոյց տալու համար, դատապարտել է նրան մահուան պատժի կախաղանով:

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՄԵՐՎԻՑ. Անտանելի շոգեր են մեզանում. շատերը փակուած են ժամի 1-ից մինչև 4-ը տներում կամ խանութների չորս պատերի մէջ: Ամբողջ ամառը մի կաթիլ անձրև չթափուեց: Սակայն փառք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

III *)

Խ. Աբովեանը շատ հարցեր է շօշափել իւր գրուածքներում: Այդ հարցերից մի քանիսներին պատասխանել է, իսկ մի քանիսներն էլ միմիայն շօշափել է:

Անաջողութիւնների հանդիպելով ծառայական ասպարէզում՝ նա ուզեցել է գրչով օգտաւէտ լինել իւր սիրելի հայրենիքին:

Մինչև այժմ գրքերը գրւում են գրաբար: Աշխարհաբարը, այսինքն՝ այն լեզուն, որով խօսում են, դեռ չի արժանացել գրականութեան մէջ տեղ գտնելուն: Ժողովուրդն էլ չի հասկանում գրաբարը: Ուրեմն «ում համար գրեմ, որ ազգը լեզուս չի հասկանալ», մտածում է Աբովեանը: — «Ախր որ ազգը էն լեզուն չի հասկանում, ապի հէնց բերնեցդ էլ ոսկի վեր ածիր. ում պէտք է տեսա»: Աբովեանը տեսնում է, «որ էլ հայի գիրք» ձեռն առնող, էլ հայի լեզուն խօսող քիչ ա գտնւում»: Իսկ «մէկ ազգի պահողն էլ, լեզուն ու հաւատն է, թէ սրանց էլ կորցնենք, վայն եկել ա մեր օրին»: Ինչպէս փրկել, ինչ դեղ դարման անել այս ցաւին: Նա լաւ գիտէ, «որ ինչ երևելի ազգեր կան, բոլորն էլ երկու լեզու ունին, հին եւ նոր»: «Մեր գրաբար լեզուն անգին է, —ասում է նա մի ուրիշ տեղ,—նմանը չունի, ինչքան լեզու էլ որ գիտեմ, մէկն էլ ա՛ էն համը, էն քաղցրութիւնը, էն ճոխութիւնը չունի, բայց մեր վաղ բարբառը՝ հազարից մէկը չի հասկանում, ինչ պէտք է արած... Շատ մարդ է գանգատ անում, թէ մեր խալխը գիրք կարդալ, ուսումն չի սիրում. ախր ինչպէս սիրի մարդ, որ զօրութիւնը չի հասկանում: Կարելի է, ես սխալւում եմ, բայց բնական է, մարդ միշտ էն բանը կսիրի, որ իր սրտովն լինի»... Նա ուզում է թողնել հին՝ գրաբարը և նոր՝ աշխարհաբար լեզուով գրել, որպէս զի նրա գրածն «ամէն մարդ հասկանայ» և սիրէ «գիրքը», «ուսումը»: Եւ հայ ժողովուրդն այլ ևս կարիք չի ունենալ թուրքի աշուղներին լսել, նրանց հեքիաթներին անգիր անել, և այլն:

«Ա՛խ՝ լեզուն, լեզուն, լեզուն որ չըլի, մարդ ինչի՞ նման կըլի...» Լեզուն դատարկ բան չի՝ հոգին ա մարդու... Մէկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ու հաւատն ա: Լեզուդ փոխիր, հաւատդ ուրացիր. էլ ինչով կարես ասել, թէ որ ազգից ես»: Այդ պատճառով նա աղաչում է «Հայոց նորահաս երիտասարդներին», եթէ «տասը լեզու» էլ սովորելու լինին, բայց իրենց լեզուն, իրենց հաւատը «պահել բանին»: «Բաս չէ՞ք ուզի, որ դուք էլ գրքեր գրէք, հարցնում է գրանցից Աբովեանը, ազգի միջումն անուն թողաք... ձեր անունը յաւիտենական յաւիտենից մնայ անմահ.. Բաս ձեր սիրտը չի՞ ուզի, որ դուք էլ տանելու գրէք, ձեր միտքը, ձեր խորհուրդը յայտնէք»...

Եւ ինքը՝ Աբովեանն առաջին օրինակն է ցոյց տալիս: [illegible] վկայութեամբ՝ նա վեց լեզու գիտէր. բայց նա «դայիմ է բանում» իւր հարազատ լեզուն: Այդ լեզուով, աւելի ճիշտն է՝ այդ լեզուի նոր բարբառով նա գրում է «Վէրք Հայաստանի», «Օվանիայ», «Պարապ վախտի խաղալիք», և այլն, և այլն էլ ոչ թէ «ազգի միջումն անուն թողնելու» համար, այլ ծառայելու այդ ազգին, զարթեցնելու նրան դարերի քնից: Թո՛ղ «կիսատ մարդիկը» «պախարակեն» նրան, թո՛ղ ծաղրեն նրա աշխարհաբարը. աջ ու ձախ պատասխանելու փոխարէն՝ նա լաւ ու մունջ կաշխատի...

Աբովեանը, ինչպէս տեսանք, շատ է սիրում հային: Ինչու, արդեօք մի՞ն պատճառով, որ ինքն էլ «Հայկայ ցեղից» է. մասամբ, ի հարկէ, այդպէս է: Բայց դա շատ նեղ հայեցակէտ կլինէր, եթէ՝ անգամ չափազանցութեան հասցրած՝ այդ սէրի պատճառը միմիայն այդ ազգիցից բղխէր:

Նրան ծանօթ է հայի անցեալը. գիտէ, թէ ինչ հալածանքներ, կոտորածներ է տարել այդ ազգը երկար դարերի ընթացքում: Անգամ այժմ՝ նրա աչքի առաջ՝ հարկատու գերի են գնում թուրքի անիրաւ բռնաբարութիւններին: Սակայն նա, այդ ազգը, հաստատարիմ է մնացել իւր հայրենի կտակին. Նա կարողացել է պահպանել իւր լեզուն, իւր հաւատը, դրանց հետ միասին և իւր գոյութիւնը: «Կարող է կակոց ցորենի հասկը լինել կայծակին ու կարկտին համբերել, որ մեր ազգը թշնամուն համբերել ա, ետ դիմացել», — հարցնում է Աբովեանը: «Հայ ազգը, ո՛չ թրից ա վախենում, ո՛չ թշնամուց, ո՛չ թօփից: Կրակն ես քցում էլի իր հաւատն ա պաշտում, ծառին ես կախ անում՝ միսը պոկում, բերանը տալիս՝ էլի իր խաչն ա պաշտում, իր Քրիստոսի անունը տալիս», — խոստովանում է հայի ոխերիմ ծնող Սարդարը:

Նա ազգասիրութիւն է քարոզում. Նա աղաչում է հայ «էրէխէքանց», որ նրանք սիրեն իրենց ազգը և չտան իրենց հայրենիքը անհաւատ մահմեդականին. «ընչանք մեռնինք ո՛չ, որ մէկ օր էլ ճոլն էլով, զինով Ռուսի ձեռի տակին նստինք, քէֆ անենք»: «Թէ ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը ձեր միտս մնայ, — ասում է նա նոյն մանուկներին, անիծեցէք ինձ, թէ օգուտ, օրհնեցէք և լսեցէք ձեր ընկերների լացն ու սուգը, նրանց հօրն ու մօր կսկիծն ու ձեր հօրն ու մօր ծոցում գինի հանգստանալիս՝ սատանեյս միտքներից բերէք»: Հայը պէտք սիրի իւր ազգը, որ կարողանայ ինքը իւր գլխի ճարն անել:

---

*) Տես «Նոր-Դար» № 131

Նատուծոյ, որ 1896 97 թուականների ընկը, որ շարունակւում էր թոյլ կերպով մինչև անցեալ տարի, ներկայումս յայտնութիւն չունի մեզանում։ Չնայելով, որ ձմեռ չլինելու պատճառով, այս ամառ, սառույց մեզանում չկայ, բայց և այնպէս Սամարղանդից և Չարջոյից ամէն օր տակառներով ձիեն են բերում այստեղ, և եթէ այդ էլ չլինէր, թերևս անտանելի լինէր այստեղ ապրելն, ու ժողովրդի մեծամասնութիւնը հեռանար այստեղից։ Անտանելի տօթերի շնորհիւ կլիմայը մեզանում մահացյին դրութեան մէջ է։ Քաղաքս կրում չափ դատարկուած է ժողովրդից։ Ունևորները կամ ֆիզիկապէս ուժեղները հեռանալով հանգստութիւն են վայելում հայրենի երկրում կամ Կովկասի հանքային ջրերում։ Իսկ քաղաքիս գլխաւոր կենդանութիւն տուողը զօրքը 5 ամսից ի վեր գտնւում է ամառային բանակատեղում։ Այս ամայութեան մէջ եթէ աչքի ընկնող մի բան կայ, այդ փոխատու բանկի հիմնարկութեան խնդիրն էր, որը մի քիչ շարժում էր գցել հասարակութեան մէջ։ Բանկի ծրագիրն արդէն ներկայացուած է Պետերբուրգ ի հաստատութիւն։

Մեր եկեղեցական գործերը տխուր վիճակի մէջ են։ Կատարեալ անմխիթարութիւն է տիրում մեր հոգևոր գործերի մէջ։ Մօտաւորապէս չորս ամիս է, որ եկեղեցու դռները փակ են և այսքան ժամանակամիջոցում ժողովուրդը զրկուած է հոգևոր մխիթարութիւնից. Մեռելը թաղւում է օտարազգեան ծէսով... պատճառն այն է, որ մեր հովիւ քահանան 5 ամսով, ասում են, արձակուրդ է ստացել և գտնւում է իր հայրենիքում հանգստութիւն վայելելու իր «երկարամեայ, բազմաշխատ և արդիւնաւոր» ծառայութիւնից յետոյ...

—

ՉԱՄԴՈՒՐԱՑԻՑ (Ախալքալաքի գաւառ). —Այս տարի ևս մեր գիւղացու համար բաղդը չժպտաց. ցանքերն առատ հունձ էր խոստանում, գիւղացու ուրախութեանը չափ չկար. գիւղացին իր պարտքերից թեթևանալու յոյսերով էր ապրում, բայց գիւղացիների համար բնաւ չսպասուած հացի որդեր երևացին, ծածկեցին ցորենի հասկերը, և փչացրին հասկերի միջից բոլոր հացահատիկները։

Գիւղացիները պատմում են, որ իրենց ամբողջ կեանքում այդ կերպ հացի բզէզներ չեն տեսել մեր կողմերում։ Հացի բզէզները երեք տեսակ են՝ մոխրագոյն, սպիտակ և կարմիր. ծածկում են հասկը և խսպառ ոչնչացնում հացահատիկները։ Վնասել են Չամդուրա գիւղի ցանքերից 600 օրավար. իւրաքանչիւր օրավարից միջին թւով դուրս էր գալիս երկու սոմառ ցորեն (մի սոմառը լինում է 20 պուդ) Ուրեմն 600 օրավարից արդիւնք սպասւում էր 1200 սոմառ ցորեն. հաշւելով մի պուդ ցորենը մէկ րուբլի, վնասը հասնում է 24,000 րուբլու։ Գիւղացիք այժմեանից հաց չունեն ուտելու. հնձում են ցորենի արտերը միայն ընտանի կենդանիներին յարդ պատրաստելու համար։ Խոտը ևս շատ քիչ է եղել. մի բարդ խոտը վաճառւում է 9 10 րուբլի, իսկ վաճառողներ շատ քիչ կարելի է գտնել։ Մեր գաւառի գիւղացիների մեծ մասի ցանքերն այս պատահարի մէջ են, մանաւանդ Վաչեան, Դիլիսկա և Գիւմբուրդա՝ մեզ հարևան գիւղերի ցանքերը։ Վերև յիշուած գիւղերի բնակիչները, որոնց առատ հացի շտեմարանները յագեցնում էին շրջապատող գիւղացիներին (գիւղերին), այժմ գրանք ձեռները ծոցերում դրած, զրկուած իրենց ապրուստի միակ միջոցից՝ մնացել են մոլորուած։ Այս օրերս դարձեալ մեր գիւղը եկաւ հարկային վերատեսուչ պ. Լևոն Ղուկասեանը և մխիթարեց գիւղացիներին, իր խորհուրդը տալով նրանց, որպէս զի դարձեալ հացի բզէզները չերևան ցանքերի մէջ, անմիջապէս աշնան հերկել արտերը։ Որովհետև մեր գիւղացիները միայն գարնանացանքս են անում, պ. Ղուկասեանը խոստացաւ, որ բերել տայ, որտեղից հարկն է, և աշնանացանքսի համար սերմնացուներ։ Վերև յիշուած պարոնը, որ քաջ գիտէ մեր գիւղացու դրութիւնը, իր եռանդուն ջանքով աշխատում է հին, փթած, նահապետական ձևով պարապող երկրագործ գիւղացուն դուրս բերել այդ վիճակից, և պարոնը գտնում է սպասածից աւելի յաջողութիւն։

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

—

Առաջնորդ տ. Մելքիսեդեկ սրբազան Իզմիրէ կ'գրէ ի պատրիարքարան, թէ, պետական որոշման համեմատ, Այդընի կուսակալութեան (Իզմիրի) իտարէի ժողովին մէջ երկու տարի պիտի բազմի հայոց առաջնորդը, երկու տարի ալ հրէից խախամպաշին։ Իսկ յոյն միտրոպոլիտը մշտապէս աթոռ ունի հոն։ Այս պատճառաւ հրէից չշահն է, որ կըշարունակուի։

—Կրետէի (Կանտիա) իբր 20 տնուոր ազգայնոց հոգևոր հովիւ տ. Մանուէլ քահանայ Կանտիայէ Խանեա գացեր է, և Կանտիա դառնալէ առաջ, գիր մը ուղղելով ի պատրիարքարան, Կանտիայի հայ եկեղեցիին խեղճութիւնը և իր ապրելու դժուարութիւնը կըյայտնէ։ Բայց տեսնելով որ իզմիրցի 6—7 հայ վաճառականներ կան կղզին, անոնց հասցէները կըհաղորդէ, որպէս զի, եթէ կարելի է, պատրիարքարանէն յորդորագիր մը ուղղուի անոնց, քիչ շատ հոգալու տեղւոյն հայ եկեղեցին և անոր քահանան։

— Հայ-հռոմէականաց նորընտիր պատրիարքը մեծապատիւ և սիրալիր ընդունելութիւն մը բրաւ մեր պատրիարքական փոխանորդին, որ տ. Բարգէն ծ. վարդապետին ընկերակցութեամբ շնորհաւորական այցելութիւն տուաւ ի դիմաց տ. Մաղաքիա ս. պատրիարք հօր։ Ընդունելութեան ներկայ էին նաև տ. Եւսեփիոս արքեպիսկ. Արփիարեան և Մուշի հայ հռոմէականաց առաջնորդ տ. Ներսէս եպիսկ. Ճնոյեան։ Ծերունի պատրիարքը յայտարարեց, թէ իր գըլխաւոր ջանքը պիտի ըլլայ սիրալիր յարաբերութիւններ մշակել և հաւասար ջանքերով օգնել կարօտեալներու և չքաւորներու, ինչպէս որ Կեսարիոյ մէջ իր առաջնորդական պաշտօնավարութեանը միջոցին միևնոյն եղանակով գործած և աշխատած է տ. Տրդատ եպիսկոպոսին հետ։ Փոխանորդ սրբազանը շնորհակալութիւն յայտնեց տ. Պօղոս պատրիարքին զգացումներուն և արտայայտութեանց համար, փոխադարձաբար միևնոյն բաղձանքներն արտայայտեց ու շնորհաւորեց անոր ընտրութիւնը՝ կար և կարողութիւն մաղթելով։ Ն. գերապատուութիւնը՝ Ճնոյեան եպիսկոպոսին ներկայութեանը, առիթէն օգտուելով, ներկայացուց տ. Բարգէն ծ. վարդապետը, որ Մուշի առաջն. տեղապահ կարգուած է, և ի մօտոյ միևնոյն գաւառին մէջ հովուական պաշտօն պիտի վարէ։ Տեսակցութիւնը, որ յոյժ սիրալիր եղաւ, տևեց կէս ժամէ աւելի, և փոխանորդ սրբազանն ու տ. Բարգէն վ. իրենց հրաժեշտի ողջոյնը մատուցանելով մեկնեցան հայ հռոմէականաց պատրիարքարանէն միևնոյն պատւով։

Զատկի և Ծնունդի տօներուն առթիւ կայս. կառավարութեան կողմէ, ազգ. պատրիարքարանի շնորհուած դրամական նպաստին ի հաշիւ՝ շաբաթ օր 10,000 զրշ.-ի գումար մը ևս յանձնուեցաւ մալիյէի կողմէ։ Այս գանձումը կատարուեցաւ տ. գործակատար Տիգրան էֆ. Տէր Ներսէսեանի և հաշուական տեսուչ Միհրան էֆ. Զօրանեանի ձեռքով։

ՀԱՅՑՈՑ ԿՈՆՑԵՐՏ

(Նամակ խմբագրութեան)

—

Պատահական մարդկանցից հայոց երգեցիկ խմբեր կազմող պ. Կարա-Մուրզան կիրակի, օգոստոսի 8-ին, Պուշկինեան կոչուած այգու թատրոնում տուեց իր կոնցերտը։

Այդ մասին մի երկու խօսք։

Խումբը բաղկանում էր 70-ից աւելի երգ-սիրողներից։ Խառն խմբի կիսից աւելին, որ կազմում էին պ. պ. բասսները և տենորները՝ մեծ մասամբ գործին անծանօթ և արուեստին անընդունակ անձեր էին։ Կարա-Մուրզայի անունը լսելով՝ շատերը սիրով գնել էին տոմսակներ՝ ներդաշնակած ժողովրդական երգեր լսելու, բայց երգիչներն ամէն բան փչացրին։

Խմբի մէջ կային այնպիսի անդամներ (մեր խօսքը գլխաւորապէս տենորների և բասսների մասին է), որոնք երաժշտութեան մասին գաղափար անգամ չունեին։ Նրանք բոլորովին փչացնում էին պ. Կարա-Մուրզայի աշխատանքը, երգում էին սխալ և ճիշտ երգողների ուշադրութիւնն էլ շարունակ դէպի իրենց դարձնելով՝ նրանց էլ սխալեցնում էին. պ. Կարա-Մուրզան էլ այդ բանից վրդովուելով՝ ինքն էլ սկսեց սխալներ անել ակոմպանեմենտի մէջ։

Սոլո երգողները---պ. Պոյաճեանը և պ. Թառամեանն իրենց ձայնով փոքր ի շատէ զարգացած և երաժշտական լսողութիւն ունեցողի ականջն էին ծակում։ Պ. Պոյաճեանը ցած նոտաները երգում էր խուլ, կարծես խզուած ձայնով, իսկ բարձր նոտաները կոկորդային ձայնով և, որ գլխաւորն է, ակոմպանեմենտին չէր հետևում։ Նրա ձայնը,---եթէ ձայն անուանենք,---փչացած ձայն է ու անպէտք, և ապագայ չունի։ Չենք հասկանում, թէ նա ինչ բանի վրայ հիմնուած սոլո է երգում։ Երևում է, որ լսողութիւն չունի, իսկ ձայնը, ասես, ելևէջի ամենևին ընդունակութիւն չունի, կոպիտ, խուլ և անտաշ մի զոռոց է։ Լաւ էր օր. Առողիկի «Ձմեռն անցաւ»-ը։

Ընդհանուր տպաւորութիւնը շատ թոյլ էր, ծափահարութիւններն առատ։

Զարմանում ենք, որ պ. Կարա-Մուրզան երգիչների ընտրութեան մէջ այդպէս անհոգ է գտնուել։

Ցանկալի է, որ պ. Կարա-Մուրզան պահի մի մշտական, արուեստի ընդունակ և ձայնաւոր երգիչներից ու լաւ սոլիստներից բաղկացած մի խումբ. այդպիսով թէ երաժշտական տեսակէտից նա մի գործ կատարած կլինի և չի էլ զրկուիլ իր եկամուտից---նիւթական շահից։ Մինչև օրս ինչ որ կատարւում է, աղմուկը շատ է, գործը՝ սակաւ։

Խ. Տ. Ն.-Բեկլեցի

Թիֆլիս, 9 օգոստոսի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՈՒՇԻ, 4 օգոստոսի. — Հայ դերասանական խումբը յուլիսի 29-ին խաղաց Էմիլ դը Ժիրարդէնի «Մի կնոջ տանջանքը» դրաման։ Ֆրանսիացի հեղինակը իր պիէսով ցոյց է տալիս, թէ ինչպէս տանջալի է այն կնոջ դրութիւնը, որ սիրում է իր մարդուն, բայց միևնոյն ժամանակ ունի, հանգամանքների շնորհիւ ծագած, մի ուրիշ անցեալ, որ հետևում է նրան, յիշեցնում է իր կատարած յանցանքը, անբաժան մնալով նրանից՝ ուզում է առնել իր հրապոյրներով լի գիրկը, սակայն կնոջ խղճի ձայնը խօսում է, թոյլ չի տալիս, մինչդեռ միևնոյն ժամանակ առկայծում է անցեալի կրակը, ի վերջոյ երևան եկած գաղտնիքների շնորհիւ կորցնում է նա իր ուժերը, տանջւում ու տանջւում...

Հեղինակը այնքան նրբութիւններով է գրել իր ընտրած նիւթը, որ շատ մեծ ուշադրութիւն, մանաւանդ պատրաստականութիւն է պահանջւում դերակատարներից պիէսը կատարելութեամբ դուրս բերելու համար. պիէսի մէջ որքան մտքեր արտայայտողները խօսքերն են, ևս առաւել - հոգեբանական լուռ մենախօսութիւնները, որոնց լիովին արտայայտութեամբ և լիովին աջողութիւն կունենայ ներկայացումը. բայց պէտք է նկատել, որ աջող չլինելուց էլ դեռ առաջ էր 29-ի ներկայացումը։

Պ. Աղայեանը (որի բենեֆիսն էր) Հանրի Դիւմոնի դերի այն տեղերը, ուր լինում է կնոջ պարզ խոստովանութիւնը, իմանում է նրա անցեալ յանցանքը, տանջւում է իր խաբուած լինելուն համար, բայց ուզում է անվեհերութեամբ այդ բանը տանել և ինքն, իբրև ազնիւ մարդ, արհամարհելով բարձր կանգնած մնալ, — անաջող անցկացրեց. դրա հետ զուգակից կիրքը, յուսախաբութիւնը դէպի իր կնքահայր Ալվարեզը, որ կնոջ սիրողն է, չկարողացաւ ամբողջութեամբ պատկերացնել։

Օր. Խիթարեանը Մաթիլդի (տանջուող կնոջ) դերում այնքան էլ լաւ չէր. խիստ շատ պակասում էին լուռ միմիկաները, որոնցով արտայայտւում է տանջուող կնոջ վիճակը. Գ. արարուածում ուր օրիորդը շատ գործ ունէր հասարակութեան ուշադրութիւնը գրաւելու, որը պիէսի ամենաճնշող տեղն է, երբ ամուսինը խլում է նրա զաւակը և իրեն յանձնում խայտառակութեան ձեռք՝ թոյլ էր։

Պ. Պետրոսեան Ալվարեզի դերում այնպէս էր, ինչպէս ընդհանրապէս մեծ, լուրջ դերերում։ Պէտք է նկատել, որ պ. Պետրոսեանը բոլոր դերերը խաղում է, համարեա միատեսակ տոնով. այդ բանն աւելի նկատելի է նրա շարժումների մէջ։

Տիկ. Մելիքբեկեանը վատ չէր վարժուհու դերում։

Տիկ. Զաբէլը կատարեց միջնորդ կնոջ Լարիսէի դերը. այս քանի անգամ է՝ տիկինը վերցնում է դրական կամ բացասական դերեր, բայց այդ դերերին տալիս է վոդևիլի բնաւորութիւն. լուրջ տեղերն անգամ այդ ձևով է արտայայտում. օր. «մենք՝ կանայքս շատ անգամ ցանկանում ենք մեր ամուսինների մահը, բայց երբ կորցնում ենք նրանց, կորցնում ենք և ամէն բան». մինչդեռ այդպիսի տեղերում հարկաւոր է պահպանել խօսքի ուժը, ասել այն, ինչ ուզեցել է ասել նիւթի հեղինակը։

Այդ օրը դուրս էր եկել Մաւրի

«Դուք, դուք իրար պահեցէք, ինչպէս ձեր նախնիքը, դուք իրար թասիբ քաշեցէք. ձեր նախնիքը միտ բերէք, ձեր հողն ու ազգը պաշտեցէք», որովհետև «անտէր երկրի, անօգնական ազգի կամ անճար մարդի ցաւն ո՛վ կըքաշի, թէ ինքը չքաշի»։ Մարդ չպէտք է այն սատճան «խղճանայ», որ ինքը իր թուրը իր սիրտը «կոխի»։ «Մարդ որ իր տանը, իր աշխարքին մուղայիթ չի կենայ, իր հողի դարդը չքաշենայ, մեռնի մէկ օր առաջ լաւ է, քան սաղ մնայ»...

> «Վա՜յ էն ազգին՝ որ աշխարքումս անտէր ա,
> Վա՜յ էն երկրին՝ որ թշնամու գերի ա,
> Վա՜յ էն խալխին՝ որ ինքն իր կեանքն. աշխարքը
> Չի պահպանիլ ու հարամու ձեռն կտայ»։

Ազգին ծառայելու, հայրենիքի «վէրքերը» սրբելու համար նա առաջարկում է զարգանալ մտաւորապէս և բարոյապէս։ Ինքը իր կողմից գիշերօթիկ պանսիոններ է բացում և ֆրէօբէլի մեթոդներ մտցնում հայ մանուկների դաստիարակելու գործի մէջ։ Նա ծնողներին խորհուրդ է տալիս իրենց «էրեխէքանց»՝ փող, հարստութիւն կտակելու փոխարէն՝ ուսում, կրթութիւն տալ։

> «Ով էս աշխարքումն ուսում լուսաւորութիւն
> Կուզի, թող տայ նրան շնորք, կրթութիւն.
> Խազինա, դօվլաթ կերթան, կփչանան,
> Մարդիս իր ուսումն կմնայ միայն»։

Ասիր

> «Ո՞վ չգիտի, փողը ձեռի
> Կեխտ ա, ու մէկ օր կհատնի, կըպակսի»։

Ուսումը, լուսաւորութիւնն ազգի առաջադիմութեան գլխաւոր փակտորներից մէկն է նա ճանաչում. «Եղբար, բացականչում է նա, որ լաւ կարդացող էր էլել երեխեքաց ջոկ, ժողովրդին ջոկ գիշեր ցերեկ խրատ էր տալ, կարդացել, լուսաւորել էր, հիմիկ մեր ազգը էս հալին կըլէր, էստեղ կընկնէր»։

Մանուկ սերունդն ազգի յոյսն է, ազգի ապագան։ Վարժապետը պէտք է սիրի իր աշակերտներին. նա նրանց մեծ եղբայրն է, ընկերակիցը։ Ինչքան ջերմ, սրտագին լինի վարժապետի յարաբերութիւնների աշակերտների հետ, այնքան էլ վերջինները կըյարգեն նրա խօսքը, նրա խորհուրդները, այնքան էլ արդիւնաւէտ կըլինի այդ տեսակ դաստիարակութիւնից առաջ եկած պտուղը։ «Այ իմ սիրելի, իմ աղիզ բալեկամք... որքան էս կապուտ երկինքը գլխիս ա, շունչս բերնումս, ձեզ, ձեզ սուրբ պէտք է համարիմ ինձ համար, ձեր արևին մեռնիմ» դիմում է Արովեանը իր աշակերտներին։ — Վագների և ուրիշների վկայութեամբ, Արովեանի յարաբերութիւնները իր աշակերտների հետ վերին աստիճանի համակրելի էին և դաստիարակչական։

Արովեանն աշակերտների ձեռքն այնպիսի գրքեր է տալիս, որոնք կարող են հետաքրքրել նրանց, զարգացնել նրանց ուշադրութիւնը, որոնց կարող են մարսել աշակերտները։ Չոր ու ցամաք գրաբար «քերականութիւնը», «խորը, խրթին» «շարադրած» բաները, «ուր սատանէն էլ մինչև մէկ բառ չի կարող իմանալ, հասկանալ», —նա վնասակար է համարում «երեխեքանց» համար...

Ուսումը, դաստիարակութիւնը պէտք է միաժամանակ լուսաւորեն մեր միտքը, ազնուացնեն մեր հոգին. Նրանք պէտք է մեր կեանքի առաջնորդը լինին։ Նրանք պէտք է բացատրեն մեզ, «թէ մենք ո՛վ ենք, մեր հաւատն ինչ ա, ինչի՞ համար ենք եկել աշխարք»։ Մինչդեռ այդ բոլորի փոխարէն Արովեանին ժամանակակից դաստիարակութիւնը բթացնում էր մտքեր, կոշտացնում սրտեր. այնպէս որ «քոռ գալիս» էին այս աշխարհք, «քոռ» էլ «գնում»։

Ինչից էր այդ ցաւալի երևոյթը. արդեօք հայը փախչում էր ուսումից, ընդդէմ էր լուսաւորութեան. ո՛չ։ Չկային անձնուէր մարդիկ, որ խելացի կերպով սկսէին դաստիարակել ժողովուրդը, չխրտնեցնէին նրան «մեռած բառով» «անհոգի շնչով», «թոյլ լեզուով», այլ տային նրան այն, ինչ որ նա կարող է մարսել, «հասկանալ»։ «Ջուրը դարիզուս չի գնալ... ճամփէն գտիր, առուն սրբիր, քար ու քօլ դէն ածա, տեսնեմ, թէ ջուրն ինքն իրան կըգա՞յ թէ չէ»։

Արովեանը շատ ցաւում է, որ մենակ է, չունի զինակիցներ. իսկ յայտնի է, որ одинъ въ полѣ не воинъ... Այսուամենայնիւ նա չի յուսահատւում, նա կըպախարակի «կարդացողներ»-ին, կըպախարակի «հոգևորականութիւնը», որոնց վրայ է ժողովրդին դաստիարակելու պարտաւորութիւնը. Նրանց անտարբերութիւնը դէպի հասարակական «վէրքեր»-ը, նրանց անբարոյականութիւնը նա կարձանագրէ իր «պատմական վէպ»-ում, որ գալոց սերունդը կարդայ այդ «պատմութիւնն» ու ճանաչի իր «անարժան» հայրերին։ «Ա՜խ մեր կարդացողներ, կարդացողներ՝ ինչ կըլի, որ ինչքան ժամանակ քնի, քէֆի հետ են անց կացնում, աւելի փողի թամահ անում, լաւ բանի թամահ անեն, մեզ լուսաւորեն, իրանք էլ թշնամուց ազատուեն, մեզ էլ ազատեն» ասում է հեղինակը իր ղասու բերնով։

Բայց նամանաւանդ ատելի է Արովեանին հոգևորականութիւնը, որ ո՛չ իր պարտականութիւններն է ճանաչում, ո՛չ էլ ուզում է ճանաչել։

(Կշարունակուի)

Յովհաննէս Ջան-Նազարեան

աղջկայ դերում տիկ. Մելիքեանի 7 տարեկան դուստրը, որ շատ սիրուն տարաւ իր դերը:

«Մի կնոջ տանջանքից» առաջ պ. Ալայեանը խաղաց Շիլլերի «Աւազակներ»-ից Ֆրանց Մօօրի դերը (V արարուած)... Բենեֆիցիանտը կարդաց և երկու անգիր ոտանաւոր, որոնց մէջ աջողութիւն ունեցաւ:

N. N.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՈՒՐՔԻԱ. Ամերիկական Դիւիի ծովակալն սպասւում էր Կ. Պոլսում, բայց նա չի գնացել այնտեղ: «Frank. Zeit.»-ի Կ. Պոլսի թղթակիցը հաւաստացնում է, թէ այդ այցը տեղի չի ունենալ նրա համար, որ սուլթանը չի կամեցել ամերիկական ծովակալի նաւին թոյլ տալ Դարդանելից անցնելու: Ամերիկական դեսպանը փորձել էր ծովակալին յորդորել, որ նա Թուրքաց մայրաքաղաքը գնայ առանց իր նաւի, բայց ծովակալն, իբր թէ, վճռապէս մերժել էր այդ առաջարկը: Ուրիշ աղբիւրներից հաղորդում են, որ Դիւին մտադիր է եղել մի ուղևորութիւն կատարելու Անատոլուի երկաթուղով Փոքր Ասիայում՝ դիտելու համար ամերիկական միսիօնարների հիմնած հայ որբանոցները, սակայն այդ բանն անժամանակ և վտանգաւոր էր համարուել, ի նկատի ունենալով հայերի մէջ տիրող ներկայ խլրտումը: Բացի դրանից, Կ. Պոլսում կասկածել էին, որ Միացեալ-Նահանգներն, իբր թէ, ձգտում են ծովային մի խցան ձեռք բերել Միջերկրական ծովի արևելեան մասում, այն է՝ Սուէզի ջրանցքի մօտ: Ամերիկական ծովակալի առաջարկներից խուսափելու համար, սուլթանը նախապատիւ էր համարել ամենևին թոյլ չտալ, որ նա տեսակցութիւն ունենայ իր հետ:

—

ՖՐԱՆՍԻԱ. «Times»-ը իր օգոստոսի 11-ի (յուլիսի 30-ի) համարի առաջին տեղում հրատարակել է հետևեալը Դրեյֆուսի գործի մասին. «Մենք հնարաւորութիւն ունենք յայտարարելու, որ բացի բորդերոյի մէջ յիշուած աննշան դոկումենտներից, կարևոր նշանակութիւն ունեցող աւելի քան 160 դոկումենտ գերմանական զինուորական attaché գնդապետ Շվարցկոպենին զանազան ժամանակներում հաղորդել էր Էստերհազին, որը գործում էր իբրև Հանրու միջնորդ և գործակից: Այդ դոկումենտներից մէկը՝ իր մէջ պարունակում էր մանրամասն տեղեկութիւններ ֆրանսիական զօրաբանակի ընդհանուր կեդրոնացման ծրագրի մասին: Այդ վաճառքից գոյացած եկամուտները բաժանում էին Էստերհազու և Հանրու միջև: Պարիզի դիւանագիտական շրջաններում Հանրին յայտնի էր իբրև իսկական դաւաճան՝ դեռ ևս նրա ձերբակալումից և անձնասպանութիւնից մի քանի ամիս առաջ, և բացի անմիջապէս շահագրգռուած պետութիւնից, այն է՝ Գերմանիայից, եւրոպական աւելի քան մի պետութիւն այդ մասին տեղեկութիւններ էր ստացել 1898 թ. սկզբին»:

Բրիւսէլի «Soir» լրագիրը ևս կարևոր մերկացումներ է անում: Այդ լրագրի Բեռլինի թղթակիցը խօսակցութիւն է ունեցել գնդապետ Շվարցկոպենի մի մօտիկ բարեկամ կամ, աւելի ճիշտ, իրեն Շվարցկոպենի հետ: Թղթակցի խօսակիցն ասել է, թէ Գերմանիան Դրեյֆուսի գործի վրայ մինչև վերջը պէտք է նայի իբրև Ֆրանսիայի ներքին գործի վրայ, եթէ մինչև անգամ Ռեննում Գերմանիային բացարձակապէս խառնեն այդ գործի մէջ: Ոչ թէ Գերմանիան, այլ ֆրանսիական արդարադատութիւնը պէտք է պարզաբանի այդ գործը: Իսկ եթէ Դրեյֆուսը, չընդունելով Էստերհազու այն խոստովանութեանը, որ բորդերոն ինքն է գրել, այնուամենայնիւ երկրորդ անգամ դատապարտուի, Գերմանիան դուրս կգայ իր չէզոքութիւնից, և Էստերհազու ու Հանրու միջոցով Գերմանիայի վրայ ծախուած իսկական դոկումենտները կհրատարակուեն. այդ դոկումենտները ցոյց կը տան, որ Դրեյֆուսը ոչ մի դէպքում չէր կարող դաւաճան լինել: Այս բանը պատմող միևնոյն անձը թղթակցի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ հաստատել է «Times»-ի հաղորդած այն լուրը, թէ իսկապէս գոյութիւն ունի 160 դոկումենտ, որ Էստերհազին ու Հանրին ծախել են Գերմանիայի վրայ:

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՌԵՆՆ, 5 օգոստոսի. – Դատարանի նիստը բացուեց 6 ժ. 30 րոպ.: Ռոժէն շարունակում է իր ցուցմունքները: Նա յանդիմանում է Պիկարին մի քանի համար, որ Էստերհազու և տիկ. Պէյս վերայ հսկողութիւն ունենալու համար փողեր էր ծախսում առանց օրինական լիազօրութիւն ունենալու: Վկան դատապարտում է Էստերհազու մասնաւոր կեանքը և ընդսմին նրան քստմնելի հալածանքների զոհ է անուանում: Ռոժէն վկայում է, որ Դրեյֆուսը դիմում էր զանազան բիւրոներ՝ զօրքերի կեդրոնացման մասին տեղեկութիւններ ստանալու համար: Դիւ-Պատու դերի մասին խօսելով վկան նկատում է, որ դիւ-Պատին «Speranza» նամակների հեղինակը, ոչ էլ թէ գործակիցն է: Ռոժէն կարծում է, որ դիւ-Պատին համոզուած էր Էստերհազու անմեղութեանը: Նա դրական ոչինչ չի ասում այն բանի մասին, թէ ով է գրել petit bleu-ն, բայց ակնարկում է, որ այդ՝ Պիկարը միայն կարող էր անել: Դըմանժը խնդրում է Ռոժէին, որ նա միշտ որոշէ Էստերհազու դերը: Ռոժէն պատասխանում է, որ Էստերհազու վերաբերմամբ ոչ ոք չի կարող որ և է բան որոշակի գիտենալ: «Բայց, շարունակում է նա՝ դառնալով Դրեյֆուսի կողմը, – ես գիտեմ միայն, որ, եթէ ինձ մեղադրէին դաւաճանութեան համար, ես կարող կը լինէի շարժառիթներ գտնել՝ ի պաշտպանութիւն իմ: Ինչո՞ւ Դրեյֆուսն ուրանում է ամենաակներև բաները»: Դրեյֆուսը ոտի կանգնելով բարձրաձայն ասում է, որ երբէք քարտէզի վրայ զօրքերի կեդրոնացման ո՛չ մի ուրուագիծ չի նշանակել. Նա պնդում է, որ իրեն երբէք ծանօթ չի եղել ո՛չ զօրքերի կեդրոնացման ծրագիրը իր մանրամասնութիւններով, ո՛չ զօրքերի բաշխումը դեպարտամենտներում: «Պէտք է, ասում է նա,---որովհետև թէ ինչ է նշանակում իմանալ զօրքերի կեդրոնացումը գլխաւոր գծերի մէջ, բոլոր նահանգներում: Ես պնդում եմ, որ չգիտէի կեդրոնացման ծրագրի մանրամասնութիւնները. ինչ վերաբերում է այն փաստերին, որ երեկ այստեղ պատմում էին, այդ փաստերի մէջ ճիշտ ոչինչ չկայ: Դա մի դատարկ խօսակցութիւն էր»:

Ռոժէից յետոյ կանչուած Բերտիւլիոսը կրկնում է այն, ինչ որ ասել է վճռաբեկ ատեանի առաջ: Նա երկար պատմում է Էստերհազու գործի մասին կատարած քննութիւնը: Նա պատմում է իր առանձնասենեակում Հանրու հետ ունեցած յուզիչ տեսարանը: Տիկին Հանրին խիստ յուզուած է և լաց է լինում: Բերտիւլիոսն ի վերջոյ հաստատ ձայնով պնդում է, թէ ինքը կատարելապէս հաւատում է Դրեյֆուսի անմեղութեանը: (Յուզում): Նա պնդում է, որ բորդերոն բաղկացած է երեք կտորից և ո՛չ թէ մանր կտորտանքներից: Դրեյֆուսի անմեղութիւնը պարզւում է այն դոկումենտներից, որոնք իր աչքի առաջն էին. բայց իրեն ամենից աւելի շփոթութիւն է պատճառում այն հանգամանքը, որ Դրեյֆուսի համար ո՛չ մի առիթ չկայ այդպիսի ոճիր գործելու: Առանց առիթների չի կարող յանցագործութիւն լինել: (Յուզում): «Պնդելով որ Դրեյֆուսն անմեղ է, շարունակում է Բերտիւլիոսը, --- ես կատարում եմ իմ պարտքը, անպայման պարտքը»: Դատաւորները ու հասարակութիւնը, ըստ երևոյթին, խիստ յուզուած են: Նիստն ընդհատուած է: Նիստը նորոգուելուց յետոյ՝ տիկին Հանրին ասում է, որ Բերտիւլիոսը իր ու ամուսնու ընդդէմ հրանալի կերպով: Տիկինը մեղադրում է Բերտիւլիոսին, թէ նա Յուդա է: Տիկինն ասում է, որ ինքը կանխաւ զգում էր այդ: (Զօրեղ յուզում): Նա վճռապէս հերքում է Բերտիւլիոսի պնդածը, թէ ստացուած բոլոր դոկումենտները պատառոտուած էին: (Երկարատև շարժում: Բերտիւլիոսն ասում է, թէ չի ուզում պատասխանել կանանց, բայց տիկին Հանրին, զայրոյթից գունատուած, ասում է. «Այստեղ կին չկայ. ես խօսում եմ գնդապետ Հանրու կողմից»: (Զօրեղ յուզում):

Կանչւում է Պիկարը: Հասարակութիւնը լսում է նրան մեծ հետաքրքրութեամբ: Պիկարն ասում է, թէ չի կարող յիշել իտալերէն գրուած այն նամակը, որի մասին խօսում էր Դելարուշ-Վերնէն և որի մէջ Դրեյֆուսի անունը կրկնւում է երկու անգամ: Նա յիշում է միայն, որ այդ տեղեկութեան դէմ իրեն նախազգուշացնում էր գնդապետ Կորդիէն, և այդ տեղեկութիւնը չափազանց ռոմանտիկական բնաւորութիւն ունէր: Պիկարը հերքում է այն կասկածը, որ ինքը, իբր թէ, որ և է դոկումենտ է ոչնչացրել Դրեյֆուսի գործի մասին և թէ ինքը ջանքեր է եղել գործ դնելու՝ բորդերոյի իսկական հեղինակի տեղ ուրիշ սպայ հանդէս բերելու: Պիկարն ասում է, թէ Դրեյֆուսը իր աշակերտն էր զինուորական ուսումնարանում: Այնուհետև նա յիշեցնում է, թէ ինքն ինչպիսի պայմաններում էր իմացել բորդերոյի մասին և այդ բանն ինչպիսի յուզում էր յառաջացրել մինիստրութեան մէջ: Դրեյֆուսի ձեռագրում, երբ նրան թելադրում էին, ձեռքի ոչ մի դողդողում չէր նկատուած: Բացի բորդերոյից՝ Դրեյֆուսի յանցանքը հաստատող ուրիշ ո՛չ մի փաստ չկար ամենևին: Պիկարը կարծում է, որ Օրմեշվիլի զեկուցումը մասամբ թելադրուած է եղել դիւ-Պատի դը-Կլամի: Պիկարը չէր կարծում, թէ Դրեյֆուսը կդատապարտուի. այնքան աննշան էին նրա դէմ եղած փաստերը: Դատից յետոյ միայն Պիկարն իմացաւ գաղտնի dossier-ի բովանդակութիւնը: Նա գիտէր Լեբրեն-Ռենոյի առաջ Դրեյֆուսի արած խոստովանութեան մասին պատմուած բաները, և Դրեյֆուսի օգտին քննութեան էր ձեռնարկել միայն այն ժամանակ, երբ նմանութիւն էր նկատել Էստերհազու և բորդերոյի ձեռագրների միջև: Պիկարը յարձակւում է դիւ-Պատու վրայ և պահանջում է, որ իրեն երես առ երես կանգնեցնեն նրա հետ: Նա երկար քննում է բորդերոն՝ ասելով, որ այն կազմուած է եղել հոկտեմբերին, երբ Դրեյֆուսը չէր կարող ծախել Մադագասկարի համար նշանակուած զօրքերին վերաբերեալ դոկումենտները: Օտարերկրեայ կցորդները, որոնք ժամանակ առ ժամանակ գալիսն բիւրօն, կարող էին իրենք վերցնել այդ դոկումենտները՝ քարտուղարի բացակայութեան ժամանակ: Պիկարը Դրեյֆուսին չի տեսել գէթ ամենաչնչին դոկումենտի պատճէն անելիս: Երբ բորդերոն բացայայտուեց, որոնումները պէտք է կատարուէին դիւ-Պատու բաժանմունքում, ուր դրադրուած էին բորդերոյի մէջ յիշուած դոկումենտները: Պիկարը մատնանիշ է անում դիւ-Պատու գործողութիւնների մէջ արած անկանոնութիւնների վրայ և յանդիմանում է նրան այն բանում, որ նա բորդերոն նշանակել է առաջին թուով, որպէս զի պատժից խուսափի: Պիկարի ցուցմունքի շարունակութիւնը յետաձգուած է վաղուան: Նիստը փակուած է առանց միջնադէպերի:

Լաբորու դրութիւնը մի քիչ վատացաւ, տաքութիւնը մի քիչ սաստկացաւ, բայց և այնպէս բժիշկները երկիւղ չեն կրում:

ՊԱՐԻԶ.---Երեկուեան «Նոր խարդախութիւն» վերնագրով «Figaro»-ի մէջ կը հրատարակուի հետևեալ հեռագիրը, որ ուղարկել է Պարիզի աւստրիական զինուորական կցորդ Շնէյդերն Էմսից, օգոստոսի 17-ից. «1897 թ. նոյեմբերի 30 թուակիր նամակը, որ վերագրւում է ինձ և տպագրուած է «Figaro»-ի օգոստոսի 16-ի համարում, կեղծ է»: «Figaro»-ն աւելացնում է. «Մենք այս հեռագիրն ուղարկում ենք Ժուօին՝ Ռեննում: Նա չի երկմտել Մերսիէյից և Ռոժէից բացատրութիւններ պահանջելու, թէ որտեղից է ծագել այս խարդախութիւնը»:

ՊԱՐԻԶ, 6 օգոստոսի. --- Ազգային պաշտպանութեան խմբի ութ պատգամաւոր, դրանց թւում Բօդրին, Դրիւմոն, Լեֆեբիւռն, կէս օրից յետոյ հաւաքուեցին Բուրբոնեան պալատում և որոշեցին գրել բոլոր պատգամաւորներին՝ համոզելու նրանց, որ պահանջեն պարլամենտի վաղաժամ գումարումը:

ՊԱՐԻԶ.---Պանիզարդին հեռագրում է «Figaro»-ին՝ հերքելով այն ցուցմունքները, որ ինքը, իբր թէ, Ռեսմանին մի զեկուցում է ներկայացրել, որի մէջ յայտարարելիս է եղել, թէ Զուարց Կոպենը յարաբերութիւններ է ունեցել Դրեյֆուսի հետ:

ՊԱՐԻԶ. Ազգայնական լրագրները քննում են Շնէյդերի հերքումը և անհրաժեշտ են գտնում, որ զինուորական դատարանը վերջացնի այդ խնդիրը, թէև այդ մի նուրբ խնդիր է:

Լաբորու վրայ ատրճանակ արձակողը ձերբակալուած է: Նրա անունն է Գլորի: Նա դիւ-Նորդ նահանգից է: Նա խոստովանուեց իր յանցանքը:

ՌԵՆՆ. Գլորին, ըստ երևոյթին, ալքոհոլիկ է: Նրա խոստովանութիւնը կասկածելի է: Կարծում են, որ նա չէ ոճրագործը:

ՌԵՆՆ.---Դատարանի նիստն սկսուեց: Հաւաքուած է բազմաթիւ հասարակութիւն: Ներկայ է փաստաբան Մօռնարը: Անդորրութիւնը կատարեալ է: Պիկարը, մի առ մի թուելով բորդերոյի մէջ յիշուած դոկումենտները, աշխատում է ապացուցանել, որ «այդ կանալիա Դ» դոկումենտը Դրեյֆուսին չի վերաբերում: Վկան այնուհետև խօսում է մի քանի դոկումենտների մասին, որոնք, ըստ երևոյթին, կեղծ են. Նա ապացուցանում է, որ ոստիկանութեան զեկուցագրները Դրեյֆուսի դէմ աննշան են: Նա բացատրում է, թէ ինքն ինչպէս էր համոզուել, որ Էստերհազին է բորդերոյի հեղինակը. Նա պնդում է, որ Էստերհազու անունն ինքն առաջին անգամ տեսել է petit bleu-ի մէջ: Ի նկատի ունենալով, որ Էստերհազին թախանձում էր իրեն ընդունելու մինիստրութեան մէջ՝ Պիկարը քննեց նրա ձեռագիրը և տեսաւ, որ այդ ձեռագիրը նըման է բորդերոյի ձեռագրին: Այդ մասին նա զեկուցում տուեց Գոնզին: Գոնզը զարմանք յայտնեց, բայց ասաց, որ մինիստրը և Բուադեֆրն անհրաժեշտ են համարում գործի վերանորոգումը: Պիկարն այս բանին պատասխանեց. «Ոչինչ չի կարող խանգարել գործի վերանորոգմանը, եթէ ենթադրութիւն կայ, որ Դրեյֆուսն անմեղ է»: Գոնզը նկատեց. «Կարելի է այնպէս անել, որ ոչ ոք ոչինչ չիմանայ»:---«Գեներալ,---աղաղակեց Պիկարը,---դուք սարսափելի բաներ էք ասում: Ես չգիտեմ, թէ ինչ կանեմ, բայց այս գաղտնիքը ես հետս գերեզման չեմ տանիլ»: (Զօրեղ յուզում: Դէմքը շրջելով դէպի գեներալները, Պիկարն աւելացնում է. «գործը հէնց այսպէս էր»:

ՌԵՆՆ.---Դատարանի նիստը: Պիկարն ասում է, որ Գոնզն իրեն յանձնարարել էր Էստերհազու դէմ եղած dossier-ն լրացնել. ուստի ինքը խուզարկեց Էստերհազու նախկին բնակարանը: Բորդերոյի հրատարակութիւնից յետոյ միակ խոշոր դէպքը Հանրու խարդախութիւնն էր: Պիկարը տրտնջում է գործակալ Հէնկէյի գործողութիւնների դէմ, որը Հանրու աջ թևն էր և զեկուցագրներ էր կազմում Պիկարի դէմ: Վկան հաստատում է այդ զեկուցագրների և այն փաստերի միջև եղած կապը, որոնց համար մեղադրւում էին իրեն: Այնուհետև Պիկարը խօսում է իր՝ Թունիսում գործուղուելու և այն խաղերի մասին, որոնցով գրգռւում էր Հանրին իր դէմ, այսինքն այն բանի մասին, որ Հանրին Պարիզի զանազան լրագրներին հաղորդել էր «Blanche» և «Speranza» հեռագրները, որոնց շնորհիւ և գտնուեց այն մեքենայութեան հետքը, որի զոհն էր նա: Նա կասկածում էր Էստերհազուն և մինիստրից պահանջում էր, որ քննութիւն կատարի: Նա վճռապէս հերքում է այն փաստը, թէ petit bleu-ի վրայ պաստային կնիքն ինքն է խփել: Նա յիշեցնում է Պելիօյի քննութիւնը և գանգատւում է, որ Էստերհազուն դատող զինուորական դատարանն իրեն հաշւ ու փորձի չէր ենթարկել: Ի վերջոյ վկան խօսում է սուտ եղանակի մասին, որով ստացուած էր բորդերոն: Ռոժէն և Մերսիէն խօսք են պահանջում. Ռոժէն և Պիկարը մի քանի բացատրութիւններ են փոխանակում իրար հետ Կանընելու լրտեսութեան նախկին գործի առթիւ: Այնուհետև Մերսիէն հերքում է Պիկարի մի քանի պնդածները և ասում է, թէ Պիկարին նամակ չի յանձնել, որ տանի այդ 1894 թ. զինուորական դատարանի նախագահ գնդապետ Մորելին. երբէք նրա հետ չի խօսել գաղտնի դոկումենտի մասին: Պիկարը պնդում է, թէ նամակ յանձնել է գնդապետ Մորելին: Նիստը փակուած է մինչև վաղը:

ԲԵՐԼԻՆ.---Պատգամաւորների ժողովը, երկրորդ ընթերցման ժամանակ, 212 ձայնով ընդդէմ 209-ի մերժեց Դորտմունդ-Ռէյն ջրանցքի պլանը, ինչպէս և լրացուցիչ շէնքերը Դորտմունդ-Էմս ջրանցքի համար: Այնուհետև 228 ձայնով ընդդէմ 126-ի մերժուած է միջին գերմանական Ռէյն-Հաբրբուրդի ջրանցքը:

ՊԱՐԻԶ, 7 օգոստոսի.--- Մինիստրների խորհրդում Վալդեկ-Ռուսսոն հաղորդեց Իլ և Վիլեն նահանգի պրեֆեկտի մի հեռագիրը, որի մէջ խօսւում է Գլորու ձերբակալման մասին, բայց տարակոյս է յայտնում, թէ նա լինի իսկական ոճրագործը:

Լէպին հրաժարուեց Գերէնի հետ այլևս բանակցելուց: Բանակցել սկսեց գեներալ Ժակկէն: Նա և Մալը, իբրև ազգային պաշտպանութեան խմբի պատուիրակներ, խորհրդակցութիւն ունեցան մինիստր-նախագահ Վալդեկ-Ռուսսոյի հետ և գաղտնի են պահում այդ խորհրդակցութեան հետևանքները:

ՊԱՐԻԶ.---«Հաւասի գործ.»-ը Գերէնի գործի մասին հաղորդում է, որ կառավարութիւնը, հէնց սկզբից, հրաժարուեց Շաբրոլ փողոցում գտնուած տան վրայ յարձակում գործելուց կամ Գերէնին զոռով տիրելուց. ընդ սմին նա ղեկավարւում է մարդասիրական նպատակներով՝ մի կողմ թողնելով արդէն միւս շարժառիթները. ուստի, ինչքան որ անհրաժեշտ կլինի, կըշարունակուեն այն միջոցները, որոնք ձեռք են առնուած թոյլ չտալու համար, որ Գերէնը հաղորդակցութիւն ունենայ արտաքին աշխարհի հետ, և ոչ մի համախմբում թոյլ չի տրուիլ կամ կցրուի:

ՎԵՆՆԱ.---Գոլուխովսկին վաղը գնում է Զիմմերինգ գրաֆ Բիւլովին այցելելու:

ՊԱՐԻԶ.---«Figaro»-ն ասում է, որ Պարիզի աւստրիական դեսպանից լիազօրութիւն ունի յայտարարելու, որ գնդապետ Շնէյդերի երեկուայ հեռագիրն իսկապէս այդ անձն է ուղարկել, և համաձայն է ճշմարտութեան:

ԲԵՐԼԻՆ.---Ջրանցքի ծրագիրը մերժուելու պատճառով Պրուսիայի ներքին քաղաքական դրութիւնը չափազանց լարուել է, որովհետև կայսրն ինքն անձամբ այդ ծրագրի կողմն էր: «Berl. Neueste Hachrichten»-ի կիսապաշտօնական մի նշանաւոր յօդուածի մէջ ասուած է, որ, կայսրը պահպանողականների վարմունքի մէջ անձնական մարտակոչ է նկատում և վճռել է, ի դէպս, եթէ երրորդ ընթերցման ժամանակ էլ մերժուի ծրագիրը, անխնայ կռիւ սկսել պահպանողականների դէմ:

ՌԵՆՆ.---Գնդապետ Պիկարը և միւսները, որոնք տեսել կամ լսել են եղել Լաբորու վրայ ատրճանակ արձակողին, յայտարարեցին, որ Գլորին նման չէ այդ անձին:

ՌԵՆՆ.---«Հաւասի գործ.»: Դատարանի նիստն սկսուեց առանց միջնադէպերի 6 ժ. 30 ր.: Ցուցմունք է տալիս Կիւինէն: Նա ասում է, թէ, երբ ինքը 1893 թ. գլխաւոր շտաբումն էր, իր մօտ պաշտօնի նշանակուած Դրայֆուսը լի կասկածելի տեղեկութիւններ էր պահանջում երկաթուղիների ականների խնդրի մասին։ Դրայֆուսը շատ տեղեկութիւններ արտայայտեց, որոնք սակայն չգտնուեցան նրա բնակարանը խուզարկելիս։ Կիւինէն ասում է, թէ ինքը համոզուած է Դրայֆուսի մեղաւորութեանը։ Այդ համոզումը հիմնուած է Դրայֆուսի խոստովանութիւնների, բորդերոյի, գաղտնի դոկումենտների, Բերտիլիօնի ցուցմունքների և այն միջոցների վրայ, որոնց դիմում էր Դրայֆուսի ընտանիքը՝ նրան արդարացնել տալու համար։ Նա քննում է այդ կէտերը և յայտարարում, թէ զինուորական գաղտնի dossier-ի մէջ գտնուած դոկումենտներն էլ բաւական կըլինէին Դրայֆուսի անմեղութիւնը հաստատելու։ --«Դա ամենևին սուտ է»---բացականչում է Դրայֆուսը։ Կիւինէն բացատրում է այն հիմունքները, որոնցով Դրայֆուսը կասկածի ենթարկուեց։ Խօսելով Ընէյղերի հերքման մասին՝ Կիւինէն պնդում է, որ նրա նամակը ճիշտ է. այդ ճշտութիւնն ապացուցւում է նոյն կցորդի մի ուրիշ դոկումենտով,---այն է՝ գործակալի պատուին եղած մի բաժակաճառի սևագրութեամբ. իսկ dossier-ի մէջ եղած դոկումենտը զինուորական դատարանին ներկայացուած էր զինուորական մինիստրի կողմից։ Ուրեմն հերքումն ուղղուած է ֆրանսիական կառավարութեան դէմ։ (Աղմուկ)։ Կիւինէն նկատում է, որ իւր հերքումով հրապարակ եկող կցորդը խիստ անյարմար դրութեան մէջ է գտնւում իւր դաշնակիցների վերաբերմամբ. նրան թոյլ են տալիս այդ հերքումը գրելու։ (Ծիծաղներ)։ Պաշտպանողական կողմից Կալիերը յայտարարում է, որ, յանուն կառավարութեան, չի մերժում Կիւինէի ցուցմունքները։ Դեմանժը նմանապէս նկատում է, որ Ընէյղերին վերաբերեալ և Մերսիէի ներկայացրած դոկումենտը դոկումենտից մի քաղուածք է միայն։ Դրայֆուսն ասում է, որ Կիւինէից տեղեկութիւններ էր պահանջել իւր իշխանաւորի հրամանով միայն։

Կանչուած է Բուադեֆրը։ Նա անում է գործի պատմութիւնը և յայտարարում, թէ հաստատում է Լեբրեն-Ռենոյի պատմածները։ Նա պատմում է Պիկարի կատարած քննութիւնը, որն առիթ տուաւ Էստերհազիին մեղադրելու։ Բուադեֆրն այն ժամանակ համոզուած էր Դրայֆուսի մեղաւորութեանը և նրա համոզումը մինչև այժմ չի փոխուել։ (Երկարատև շարժում)։ Նա խօսում է Հանրիի խարդախութիւնը երևան գալու մասին, որի պատճառով ինքը հրաժարական տուեց, և հաստատում է Մերսիէի պատմածը Ելիսեան պալատում պատահած անցքի մասին։ Դրայֆուսը պատասխանում է, որ ինքն աւելորդ է համարում պատասխանել Բուադեֆրին։

Նիստը նորոգուելուց յետոյ կանչուած է գեներալ Գոնզը։ Նա յայտարարում է, որ Դրայֆուսի դատի մէջ իւր ցոյց տուած վարմունքը նպատակ ունէր պաշտպանելու զօրաբանակը յանցաւոր փորձերի դէմ։ Նա ասում է, որ Էստերհազին երբէք չի ծառայել խուզարկու բիւրոյի մէջ և երբէք Սանդհերը նրան ոչ մի գործ չի յանձնել։ Նա անհնարին բան է համարում, որ Էստերհազին լինի իսկապէս բորդերոյի կազմողը. դրա համար հարկաւոր էր ունենալ բորդերոյի մէջ յիշուած դոկումենտները, իսկ խուզարկութիւններով յափշտակման ոչ մի հետք չի գտնուած նրա մօտ։ Վկան ջերմագինս ցաւում է, որ 1894 թ. զինուորական դատարանի նիստերը էին ունենում դռնփակ։ Գոնզը քննում է դատի համար հաւաքուած դոկումենտները և ի նկատի է կացուցանում Դրայֆուսի բազմաթիւ յանդգնութիւնները։ Դրայֆուսի անունը, ասում է նա, դոկումենտների մէջ հանդիպում ենք շատ անգամ, բայց ոչ մի տեղ խօսք չկայ նրա անմեղութեան մասին։ Գոնզը հերքում է Պիկարի մեղադրանքները և արդարացնում է դիւ-Պատին մեղադրանքների դէմ, թէ նա աշխատակցել է Էստերհազուն՝ բորդերոն կազմելիս։ Դրայֆուսի խոստովանութեան վերաբերմամբ՝ Գոնզը նոյն ցուցմունքներն է անում ինչ որ Մերսիէն։ Նա աւելացնում է, սակայն, որ Լեբրեն-Ռենոն, հասարակական նախազգուշութիւնից վախեցած, չէր համարձակուել խօսել խոստովանութեան մասին, և Դրայֆուսին զինուորական կոչումից զրկելու արարողութեան վերաբերեալ պատմել էր ոչ ամեն բան։ Գոնզն անճիշտ է համարում Պիկարի յայտարարումն այն յուզման մասին, որ, իբր թէ, արտայայտել էր ինքը՝ յունուարի 5-ին՝ Մինիստրի արած քայլերի առթիւ։ Այդ քայլերի մասին իմացել էր միայն յունուարի 6-ին։ Նա չի խնդրել Պիկարի ոչ մի գործողութիւն։ Գոնզը յաճախ նայում է ձեռքին բռնած մի հատ տետրակի, որից քաղում է իւր ցուցմունքները։ Պատասխանելով իրեն արած հարցմանը՝ նա ասում է, որ երբէք անմիջական տեղեկութիւններ չէին եղել այն բանի մասին, թէ բորդերոյի մէջ յիշուած դոկումենտներն ով է ծախել օտար պետութեան։ Գոնզը հերքում է Բերտուլիւսի մեղադրանքները Հանրու վերաբերմամբ և խոստովանում է, որ, երբ Հանրին իրեն էր յանձնել իւր շինած կեղծ դոկումենտը, ինքը պնդել էր, որ այդ դոկումենտը Պիկարին ցոյց չտրուի։ Դեմանժը և վկան խիստ փոխադարձ նկատողութիւններ են անում։ Գոնզը յայտարարում է, թէ Պիկարին խորհուրդ էր տուել չզբաղուել բորդերոյի ձեռագրով, այլ միայն որոշել այդ և Էստերհազու ձեռագրի միջև եղած նմանութիւնը։ Դրայֆուսը յայտարարում է, որ կը պատասխանի անմիջապէս այն քաղուածքին, որն իրեն տեսել էր բիւրոյում։ Պատասխանելով Գոնզին՝ նա նկատում է, թէ, հակառակ նրա ասածին, անկարելի բան է, որ սպան ում և իցէ մինիստրութիւնը ներս տանի։ Այնուհետև Պիկարն իրեն արդարացնում է Գոնզի այն մեղադրանքների դէմ, որ ինքը, իբր թէ, հրամայել էր լրտեսին ձերբակալել առանց որ և է փաստի և թէ ինքը մեծ գումար էր ծախսել Էստերհազուն հսկելու համար։ Պիկարի և Բիլլօյի մինչև մի տաք վէճ է տեղի ունենում։ Բիլլօն փաստեր և բացատրութիւններ է տալիս իւր մինիստրութեան ժամանակ ծախսուած և բաշխուած գումարների մասին։ Նիստը փակուած է։ Ամենքը ցրւում են առանց միջնադէպերի։

Լաբորու դրութիւնը շարունակւում է լաւանալ։

ՊԱՐԻԶ. «Հաւասի գործ.»։ Դրութիւնը Շաբրոլ փողոցում չի փոխուել։ Առաւօտեան ճանապարհը փակող փայտերը վերցրած են, բայց կէս-օրին դարձեալ խիստ միջոցներ ձեռք առնուեցան։ Տունը շրջապատուած է խիստ հսկողութեամբ և Շաբրոլ փողոցը փակուած է։

ԼՈՆԴՈՆ. Դրութիւնը հարաւային Աֆրիկայում լաւացել է։ Կապշտադից կամաւորների մի զօրախումբ մեկնեց Բուլուայո։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի.---«Պրաւ. Վեստ.»-ում հրատարակուած է, թէ Աստրախանի նահանգում Ցարևսկի գաւառի Կոլոբովկա գիւղում յուլիսի երկրորդ կիսին երևան է եկել պնևմոնիայի մի ծանր տեսակը, որից վախճանուել է 21 հոգի։ Բժշկական և հիւանդութիւնը սահմանափակելու բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք են առնուած։

ՌԵՆՆ.---Լաբորու դրութիւնը գոհացուցիչ է. նա վէր կացաւ անկողնից և մինչև անգամ կարողացաւ աշխատել։ Բժիշկները յոյս ունեն, որ երկուշաբթի կամ երեքշաբթի նա կարող է դուրս գնալ։

ԲԵՐԼԻՆ.---Պատգամաւորների ժողովը երրորդ ընթերցման ժամանակ մերժեց միջին գերմանական ջրանցքի ծրագիրը և ազգայնական ազատամիտների առաջարկը՝ կառավարչական ծրագիրը վերականգնելու մասին։ Մեծամասնութիւնը կազմում էր 235 ձայն, փոքրամասնութիւն---147։ Ձեռնպահ մնացին 32 պատգամաւոր, որոնց մեծամասնութիւնը պահպանողականներ էին։ Այնուհետև 275 ձայնով ընդդէմ 134-ի մերժուեց կեդրոնի առաջարկը Դորտմունդ-Ռէյնի ջրանցքը պեղելու մասին։ Ձեռնպահների թիւը նոյնն էր։ Այս առաջարկի դէմ ձայն տուին պահպանողականները, ազատախոհները և ազգայնական ազատամիտների մեծամասնութիւնը։ Այնուհետև մերժուեց ամբողջ ծրագիրը։ Հետևեալ նիստը նշանակուած է երկուշաբթի։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Սոլոլակ, Սաղոմյա փողոց, № 64)

(ակուշական տուն)

Հեռախօս № 130

Երթևեկ հիւանդների ընդունարան ընդունելութիւն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամ 2---4-ը ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն ամենայն օր՝ ժամը 8---10 առաւօտեան---վճարը 2 ր.։ Գիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի։ Ձեռներնները ձրի են։ Գինեկոլոգիայի բաժանմունք ընդունարանները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուա գիշերուայ համար. Ծննդաբերական բաժանմունքը մանուկները---1 ր. մինչև 5 ր. մի օրուա-գիշերուայ համար։ Երկունքից ազատուելը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամահատութիւն ըստ համաձայնութեան ժամանակ ձրի։ Չունևորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր բժշկւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների աջակցութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ՝

Մ. ՄԿՐՏՉԵԱՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը Բագուից Թիֆլիս մեկնում է ցեր. 4 ժ. 15 ր., հասնում Թիֆլիս առ. 8 ժ. 40 ր., Թիֆլիսից Բաթում մեկնում է առ. 9 ժ. 10 ր., հասնում է Բաթում եր. 8 ժ. 32 ր.։

Մարդատար № 3 գնացքը Բագուից Թիֆլիս մեկնում է գիշ. 12 ժ. 20 ր., Թիֆլիս հասնում է եր. 6 ժ. 38 ր., Թիֆլիսից Բաթում՝ մեկնում է եր. 7 ժ. 37 ր., հասնում է Բաթում առ. 8 ժ. 12 ր.։

Մարդատար № 2 գնացքը Բաթումից Թիֆլիս մեկնում է առ. 9 ժ. 15 ր., Թիֆլիս հասնում է եր. 8 ժ. 53 ր. Թիֆլիսից Բագու մեկնում է եր. 9 ժ. 23 ր., Բագու հասնում է ցեր. 11 ժ. 40 ր.։

Պոստային № 4 գնացքը Բաթումից Թիֆլիս մեկնում է եր. 9 ժ. 05 ր., Թիֆլիս հասնում է առ. 9 ժ. 45 ր., Թիֆլիսից Բագու մեկնում է առ. 11 ժ. 32 ր., Բագու հասնում է առ. 6 ժ. 15 ր.։

ԲԺԻՇԿ Գ. Ս. ՀԵՐՑՖԷՅԼԴ

Թիֆլիս, Մադաթովսկայա, 5

մասնագէտ կաշու, վեներական, սիֆիլիսական և միզային գործարանների հիւանդութիւնների (ելեկտրականութեամբ), վերադարձաւ դէպի արտասահման կատարած գիտնական ուղևորութիւնից և վերանորոգեց հիւանդների ընդունելութիւն ամեն օր առ. ժ. 9 11 և եր. ժ. 5 8.

ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ

№ 5 գնացքը Թիֆլիսից Բորժոմ մեկնում է ցեր. 2 ժ. 40 ր., Բորժոմ հասնում է եր. 7 ժ. 35 ր.։

№ 6 գնացքը Բորժոմից Թիֆլիս մեկնում է գիշ. 2 ժ., Թիֆլիս հասնում է առ. 7 ժ. 35 ր.։

№ 7 գնացքը Թիֆլիսից Գորի մեկնում է առ. 10 ժ. 15 ր., Գորի հասնում է ցեր. 12 ժ. 46 ր.։

№ 8 գնացքը Գորուց Թիֆլիս մեկնում է եր. 7 ժ. 40 ր., Թիֆլիս հասնում է եր. 10 ժ. 02 ր.։

№ 15 գնացքը Թիֆլիսից Մցխէթ մեկնում է առ. 8 ժ. 10 ր., Մցխէթ հասնում է առ. 8 ժ. 55 ր.։

№ 16 գնացքը Մցխէթից Թիֆլիս մեկնում է առ. 10 ժ. 08 ր., Թիֆլիս հասնում է առ. 10 ժ. 55 ր.։

№ 17 գնացքը Թիֆլիսից Մցխէթ մեկնում է եր. 5 ժ 15 ր., Մցխէթ հասնում է եր. 5 ժ. 56 ր.։

№ 18 գնացքը Մցխէթից Թիֆլիս մեկնում է եր. 6 ժ. 53 ր., Թիֆլիս հասնում է եր. 7 ժ. 32 ր.։

Ծանօթ. Ամառանոցային №№ 17 և 18 գնացքները երթևեկում են տօների նախորդ և տօն օրերը, իսկ №№ 15 և 16 գնացքները տօն և տօներին հետևող օրերը։

ՌԱԶՄԱ-ՎԻՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

(մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը)

Թիֆլիսից մեկնում են

Հինգ տեղ ունեցող կարեթներ. առաջինը. առ 7 ժ. գիշերում է Մլեթում, Վլադիկավկազ հասնում է հետևեալ օրը եր. 7 ժ. 20 ր., երկրորդը—առ. 9 ժ., գիշերում է Փասանաուրում, Վլադիկավկազ հասնում է հետևեալ օրը եր. 9 ժ. 20 ր.։

Վեց տեղ ունեցող օմնիբուսներ առանց գիշերելու. առաջինը—ցեր. 1 ժ., Վլադիկավկազ հասնում է հետևեալ օրը ցեր. 3 ժ. 25 ր., երկրորդը—եր. 7 ժ. Վլադիկավկազ հասնում է հետևեալ օրը եր. 9 ժ. 50 ր.։

Լինէյկա, առանց գիշերելու, ցեր. 3 ժ., հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը եր. 6 ժ. 20 ր.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Նոր լոյս տեսաւ
ՊՈՒՇԿԻՆ
ԱՏ. ԽՈՒՐՑԵԱՆԻ
ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

Դիմել—Тифлисъ, Тифлисско Общество Изданія Армянских книгъ կամ Tiflis (Russie), Sociét de la publication des livres Arménien
Ընկերութեան անդամ գրավ նեյն ընկերութեան հրատարակու թիւններից քսում են 8 ր. գին և վճարում են տարեկան ՎԵՑ ՌՈՒԲԼԻ։ Գրքերը կարելի է ստանա և վերադիր վճարով։
(105) (եր. ա.) 10---3

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ բարձր դասարանների համար հարկաւոր է մի հատ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱՒԱՐՏ ՌՈՒՍԵՐԷՆ լեզուի ուսուցիչ՝ շաբաթական 22—27 դասով, դասագինը քառասնակա 40) ռուբլով։ Ցանկացողները պէտք է դիմեն նոյն դպրանոցի հոգաբարձութեանը, ներկայացնելով իրենց ուսման վկայականները։
107 Անդամ հոգաբարձութեան՝ Արտաշէս Դարբինեան 3---1

ՃԱՇԻ ՀՈՏԱՒԷՏ ԿԵՕԼԵՐԵԱՆ ՄԱՆԱՆԵԽ
փաշխացրած, կատարելապէս պատրաստ ԲՈԴԻԱԲԱՐ պատրաստելու համար, որ համ, հոտ և էժանութեան կողմից գերազանցում է բոլոր մանանեխներին։
Ծախու կայ ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ աւելի նշանաւոր վաճառականների մօտ։
(М.) 6. 3 – 2

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Баку Прачешная, домъ Теръ Ованесова)
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողներին տրւում են ատեստատներ։ Կուրսերում աւանդւում են՝ 1) առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրայ. 2) հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային. 3) առևտրական թղթակցութիւն. 4) առևտրական անտեսագիտութիւն. 5) առևտրական մուրհակային օրէնքներ. 6) գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագրումն ձեռագրի)։
Պարապմունքները սկսւում են սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամենայն օր՝ կուրսերում և «Եղբ. Ծովյանեան և Ընկ.» Բագուայ բաժանմունքում... Օտարաքաղաքացի ունկնդիրների յարմարութեան համար կուրսերում ընդունւում են գիշերօթիկներ։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը—տրւում են եւ ուղարկւում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են учредителю коммерческихъ курсовъ А. И. Тер Касна-рову, Баку.
(99) 25 6

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական Կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ և երկու սեռի անձանց, պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողներին տրւում են ատեստատներ։
Աւանդելի առարկաները սրանք են. 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական թղթակցութիւն 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7 Գեղագրութիւն (վատ ձեռքի - почеркъ - ուղղելը)։
Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները՝ սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում Սոլոլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տուն, № 9, Սերգիևսկայա և Նադարնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ՁՐԻԱՊԷՍ եղբ. Ծովյանեանների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի տանը въ Тифлисъ, С. П Мануэльянцу.
(95) 25–6

Дозв. цензурою. Тифлисъ, Августъ 9-го дня, 1899 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանց Типогр. А. Ө. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковный домъ.